Ներդրումներ դեպի ապագա

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## 2025Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**

1 օգոստոսի 2025թ.

* Ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- **ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- 2025Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ | 2025 1-ին կիսամյակ

**«Հուսալի, դիմացկուն և թվային ուղղվածությամբ. ստեղծված՝ կայուն աճի համար»**

- Հայաստանի առաջատար **ունիվերսալ բանկերից մեկը**, որի առաքելությունն է իր ինքնատիպ և նորարարական լուծումներով նպաստել **հայկական հասարակության կայուն զարգացմանը**:
- Հզոր և դիվերսիֆիկացված **ֆինանսական խումբ**՝ կենսաթոշակային ֆոնդերի առաջատար կառավարիչ **Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթի** և լիզինգի շուկայի առաջատար **Ակբա Լիզինգի** հետ միասին:
- **Ցուցակված Հայաստանի ֆոնդային բորսայում** և բաժնետերերի դիվերսիֆիկացված բազայով, ներառյալ ուժեղ ինստիտուցիոնալ գործընկերներով և բաժնետոմսերի հրապարակային ազատ շրջանառվող մասով:
- Հանձնառու **կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին**՝ հիմնված խիստ ռիսկերի կառավարման և համապատասխանության գերազանցության վրա:
- **Լայն և հավատարիմ հաճախորդների բազա**՝ թվային հասանելիության և ժամանակակից բանկային փորձի վրա ռազմավարական շեշտադրմամբ:

**661,000+**
ԱԿՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

**65**
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

**1,800+**
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

**849,000+**
ՔԱՐՏԵՐ

**41,000+**
POS ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐ

**260+**
ԲԱՆԿՈՄԱՏՆԵՐ

**94.4%**
ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ

FitchRatings
**BB- ՎԱՐԿԱՆԻՇ**
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԿԱՅՈՒՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

# ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**«Հավասարակշռված սեփականություն՝ ապահովված ուժեղ ինստիտուցիոնալ կառույցների և հանրային ներկայությամբ»**




**10%** PROPARCO GROUPE AFD

## Պրոպարկո

«Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD)» խմբի դուստր ընկերությունն է և AFD-ի կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման թևը։
Բանկի բաժնետեր է 2024թ. դեկտեմբերից

**2.24%**

## Սակամ Ինտերնասիոնալ

Սակամը հանդիսանում է Ֆրանսիական Կրեդի-Ագրիկոլ (Crédit Agricole) բանկային խմբի ներկայացացուցիչ և բանկի բաժնետեր է 2006թ.-ից

**12.76%**

## Ազատ շրջանառվող մաս

(free float)

Այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք միասին (այդ թվում՝ աշխատողները) տիրապետում են ազատ շրջանառվող բաժնետոմսերին (ընդհանուր 5400+ անձ)

**75%** acba Federation

## Ակբա Ֆեդերացիա

Ակբա Ֆեդերացիան 2017թ.-ից ի վեր հանդիսանում է Ակբա բանկի նշանակալից մասնակից, հիմնադրվել է 2017թ.-ին 10 Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորումներ (ԳՓՄՄ) հասարակական կազմակերպությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրը գործում է Հայաստանի մեկ մարզում

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2025 1-ին կիսամյակ

**«Կենտրոնացած աճի, շահութաբերության և իրական տնտեսության վրա ազդեցության վրա»**

## ԱԿՏԻՎՆԵՐ

**943.4** մլրդ ՀՀ դրամ
(**$ 2,460** մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 8.1% մասնաբաժնով

## ՎԱՐԿԵՐ

**678.3** մլրդ ՀՀ դրամ
(**$ 1,769** մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 9.8% մասնաբաժնով

## ԿԱՊԻՏԱԼ

**174** մլրդ ՀՀ դրամ
(**$ 454** մլն)

## ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

**99.6** մլրդ ՀՀ դրամ
(**$ 260** մլն)

1-ինը ոլորտում

## ԱՎԱՆԴՆԵՐ

**607.9** մլրդ ՀՀ դրամ
(**$ 1,585** մլն)

3-րդ խոշորը շուկայում՝ 8.6% մասնաբաժնով

## ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ

**17.2** մլրդ ՀՀ դրամ
(**$ 44.9** մլն)

- Հիմնական ցուցանիշների կայուն աճը հաստատում է Ակբա բանկի դիրքը Հայաստանի **առաջատար 3 բանկերի թվում**
- Ակբան առաջատարն է **լիզինգի շուկայում** և ապահովում է **վարկերի** և **ավանդների** կայուն աճ
- Ամուր կապիտալային հիմքը ապահովում է **կայուն աճ** և **ռազմավարական դիմացկունություն**
- **17.2 մլրդ ՀՀ դրամ** զուտ շահույթի բարձր մակարդակը վկայում է ֆինանսական ամրության մասին
- Մեր արդյունքները վկայում են, որ մենք կենտրոնացած ենք **երկարաժամկետ արժեքի ձևավորման** և **իրական տնտեսության զարգացման վրա**

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2025 1-ին կիսամյակ

**«Բարձր եկամտաբերություն, կայուն կապիտալ և աճող թվային հասանելիություն»**

**ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**
**3.7 %**
տարեկանացված

**ԿԱՊԻՏԱԼԻ ԵԱՅՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**
**20.4%**
տարեկանացված

**ԾԱԽՍԵՐ/ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**
**42.85 %**

**ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ**
**22.72 %**

**ԹՎԱՅԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՕԳՏԱՏԵՐԵՐ**
**54%**

**1 ԲԱԺՆԵՏՈՄՍԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ԵԱՅՈՒՅԹ**
**5,749** ՀՀ դրամ
(**$** 15)
տարեկանացված

- **Կապիտալի 20.4%** և **ակտիվների 3.7%** շահութաբերության ցուցանիշները վկայում են բարձր շահութաբերության և կապիտալի արդյունավետ օգտագործման մասին
- Մեր կապիտալի համարժեքության գործակիցը կազմում է **22.7%**, ապահովելով կարգավորողի պահանջներից բարձր **կայուն բուֆեր** և **դիմադրողականություն փոփոխվող միջավայրում**
- **Ծախսեր/եկամուտներ** գործակցի **42.85%** ցուցանիշն արտացոլում է մեր շարունակական ուշադրությունը ծախսերի խիստ վերահսկման նկատմամբ
- Թվային ներգրավվածությունը շարունակում է աճել՝ **ակտիվ հաճախորդների 54%**-ը ամսական օգտագործում է բանկի թվային ուղիները

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- **ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**
- 2025Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ

Ապրիլի 29-ին Ակբա Բանկը կազմակերպեց իր **առաջին հանդիպումը ներդրողների առանձին խմբի հետ**, որտեղ ներկայացվեցին Բանկի **2024 թվականի տարեվերջյան կատարողականը** և **2025 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական արդյունքները**։ Ակբան հանձնառություն է ստանձնել, որ եռամսյակային հանդիպումները կշարունակվեն պարբերաբար՝ ներգրավելով ներդրողների բոլոր սեգմենտներին։

## ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Բանկի **բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը** տեղի ունեցավ մայիսի 29-ին՝ բաժնետերերի ֆիզիկական և առանց ֆիզիկական ներկայության

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար աուդիտի եզրակացությամբ **համախմբված ֆինանսական հաշվետվությունները** ստորագրվեցին ապրիլի 16-ին, նախնական հաստատվեցին խորհրդի կողմից ապրիլի 28-ին և պաշտոնապես հաստատվեցին տարեկան ընդհանուր ժողովի կողմից մայիսի 29-ին

## ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

Տարեկան ընդհանուր ժողովը հաստատեց **6.6 մլրդ ՀՀ դրամի** չափով շահութաբաժինների վճարումը **(+1.1 մլրդ ՀՀ դրամ՝ 2023 թվականի համեմատ)**, ինչը մեկ բաժնետոմսի դիմաց կազմեց **1,100 ՀՀ դրամ (+10% նախորդ տարվա համեմատ)**։ Շահութաբաժինների վճարման գործակիցը կազմեց **22.9%**։ Շահութաբաժինները բոլոր իրավասու բաժնետերերին վճարվեցին հունիսի 5-ին

## ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի **6 անդամ վերանշանակվեցին**, **2 անդամի լիազորությունները դադարեցվեցին** և նշանակվեց **1 նոր անկախ խորհրդի անդամ**։ Կառավարումն ավելի ամրապնդելու համար ընդունվել են Բանկի կանոնադրության և Խորհրդի կանոնակարգի նոր խմբագրությունները

## ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Խորհուրդը հաստատեց **Ակբա Լիզինգի** կառավարման նոր մոդելը, որի շրջանակներում, միասնական հաշվետվողականության համար, վերջինիս հաշվետվությունները (օր.՝ Ռիսկերի, Համապատասխանության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և Տեղեկատվական անվտանգության) կինտեգրվեն Բանկի **ներքին վերահսկողության համակարգում**

## ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հաստատվել է համապարփակ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ռազմավարություն, որը վերահաստատում է ԲՍԿ-ն որպես **Ակբայի երկարաժամկետ ուղղության ռազմավարական հենասյուն**

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բանկն ընդունեց Համապատասխանության գործառույթի զարգացման նոր ռազմավարություն և վերանայված համապատասխանության քաղաքականություն՝ ամրապնդելով **ինստիտուցիոնալ կառավարման շրջանակը**։

## ԲԻԶՆԵՍ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Իրականացված պրոդուկտային արշավներ

Մայիսի 5-ից Ակբան մեկնարկեց **10.9%** ֆիքսված տոկոսադրույքով **ՓՄՁ վարկերի նոր արշավ**, որը տևեց մինչև հուլիսի կեսերը։ Մայիսի 6-ին մեկնարկեց **երկրորդ արշավը**, որի շրջանակներում չապահովված **գյուղատնտեսական վարկերն** acba digital հարթակի միջոցով առաջարկվում էին ավելի բարենպաստ պայմաններ։ Բացի այդ, երկրորդ եռամսյակում Բանկը մեկնարկեց **11 այլ արշավ**, այդ թվում՝ **7-ը՝ American Express-ի, 3-ը՝ Mastercard-ի** և **1-ը՝ ավանդների** հետ կապված։

### Մասնաճյուղերի ցանցի ընդլայնում

Խորհուրդը հաստատեց նոր մասնաճյուղի բացումը Երևանի մոտակայքում գտնվող **Homplex հիպերմարկետում**, որը կդառնա **Ակբայի 66-րդ մասնաճյուղը**՝ երրորդ եռամսյակում բացվելուց հետո։

### Ապառիկ տեղում վճարված ֆակտորինգ հաճախորդների համար

acba digital հավելվածում նախապես հաստատված վարկային սահմանաչափեր ունեցող մանրածախ հաճախորդներն այժմ կարող են օգտվել **Ապառիկ տեղում վճարված ֆակտորինգի ծառայություններից** ընտրված գործընկեր կազմակերպություններում՝ **ընդլայնելով ֆինանսական հասանելիությունը**։

### Իրական ժամանակում վճարումների մշակման երկարաձգում

Գործառնական բարելավումները այժմ հնարավորություն են տալիս հաճախորդների **թվային** և **տերմինալային** գործարքները իրական ժամանակում մշակել մինչև ժամը 22:00-ն ամեն օր, ներառյալ հանգստյան օրերը։

### Նոր արժութային հաշիվների հնարավորություններ acba digital-ում

Ակբա բանկն այժմ հնարավորություն է տալիս հաճախորդներին բացել ընթացիկ հաշիվներ **չինական յուանով (CNY)** և **Արաբական Միացյալ Էմիրությունների դիրհամով (AED)**՝ անմիջապես acba digital հավելվածի միջոցով, ինչը մեծացնում է **հարմարավետությունը** և **միջազգային գործարքների ճկունությունը**։

## ՈԼՈՐՏԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ ԵՎ ՖՈՐՈՒՄՆԵՐ

**Silicon Mountains Tech ֆորում** (մայիսի 15, Լոռու մարզ). Ակբա Բանկը մասնակցեց որպես գործընկեր և արհեստական բանականության թեմայով պանելային քննարկման մասնակից

**CyberGEN Bug Bounty մրցույց.** Ակբայի կիբերանվտանգության թիմը զբաղեցրեց 1-ին տեղը՝ ընդգծելով թվային կայունության և անվտանգության նկատմամբ նվիրվածությունը:

**ՓՄՁ ֆինանսավորման պանելային քննարկում** (Ապրիլ). Ակբան մասնակցեց պանելային քննարկմանը, որը համատեղ կազմակերպվել էր Բանկերի միության և Գերմանա - Հայկական հիմնադրամի հետ:

**Career City Fest աշխատանքի տոնավաճառ** (Ապրիլի 25 - 26). Ակբայում, որպես Հայաստանի առաջատար գործատուներից մեկի մոտ, աշխատելու հնարավորությունների ներկայացում:

## ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿՍՊ)

**Գորիսում մարզադաշտի նախագիծ.** «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համագործակցությամբ և Ակբայի համաֆինանսավորմամբ կառուցվել է ներառական ժամանակակից մարզադաշտ՝ համահունչ ՄԱԿ-ի Կայուն զարգացման #3 և #10 նպատակների հետ

**Ստեփան Գիշյան հիմնադրամի նախաձեռնություն.** Վերանորոգվել է Մաստարա գյուղի ֆրանսերեն լեզվի դասարանը՝ ամրապնդելով մշակութային կրթությունը և կապերը Ֆրանսիայի հետ

**Օրգանական գյուղատնտեսության ծրագիր.** NABU-ի հետ համագործակցությամբ, որն արդեն 10-րդ տարին է, Ակբան մեկնարկեց 2025 թվականի օրգանական գյուղատնտեսության ծրագիրը, որըն աջակցում է ֆերմերներին և գյուղատնտեսներին հավաստագրման և արտահանման խթանման գործիքներով

**Ծառատունկի նախաձեռնություն Գեղարքունիքում.** Իր բնապահպանական պատասխանատվության ջանքերի շրջանակներում Ակբա բանկի աշխատակիցները միացան «Իմ անտառը Հայաստան»-ի հետ համատեղ ծառատունկի նախաձեռնությանը, որը տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի մոտակայքում

**Երևանի գինու օրեր 2025:** Ակբան կրկին գլխավոր հովանավորն էր՝ խթանելով տեղական զբոսաշրջությունը և փոքր բիզնեսի տեսանելիությունը

# ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«Կենտրոնացած շահութաբեր աճի, թվային առաջատարության, հաճախորդների ընդլայնման և կայուն զարգացման վրա»**

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿ

Հաճախորդը մեր բոլոր գործողությունների կենտրոնում է՝ սկսած պրոդուկտի մշակումից մինչև ծառայությունների մատուցում և հարաբերությունների կառավարում

## ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ

Մենք ներդրումներ ենք կատարում թվային հարթակներում, ավտոմատացման և արհեստական բանականության մեջ՝ ավելի արագ, ավելի խելացի և մատչելի բանկային ծառայություններ մատուցելու համար

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԿԻՆԳ

ԲՍԿ սկզբունքներն առաջնորդում են մեր ռիսկերի կառավարման, պրոդուկտների մշակման և շահառուների հետ ներգրավման ռազմավարությունները

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ

Մենք ներդնում են կառուցվածքային, տեխնոլոգիական և գործընթացային բարելավումներ՝ արդյունավետությունը, ծախսերի վերահսկողությունը և սպասարկման որակը բարելավելու համար

## ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

Մենք կենտրոնանում ենք գործընթացների ամբողջական օպտիմալացման և ավտոմատացման վրա՝ արագություն, կայունության և գործառնական գերազանցություն ապահովելու համար

## ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

**շուրջ 15%**
Վարկային և ավանդային պորտֆելների տարեկան աճ

**շուրջ 20%**
Կապիտալի շահութաբերություն

**շուրջ 40%**
Եկամուտներ/ծախսեր) (Ծախսերի/եկամուտների գործակից)

**700.000+**
Ակտիվ հաճախորդներ 2025թ. տարեվերջին

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- **2025Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# ԱԿՏԻՎՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 2025 1-ին կիսամյակ

**«Ակտիվների կայուն աճ՝ պայմանավորված կապիտալի և բիզնեսի ընդլայնմամբ»**

**Ակտիվներ,** մլրդ ՀՀ դրամ




**Պարտավորություններ և կապիտալ,** մլրդ ՀՀ դրամ




- 2025 թվականի 2-րդ եռամսյակի վերջում ընդհանուր ակտիվները կազմել են **943.3 մլրդ դրամ**: Այն կազմում է բանկային համակարգի ակտիվների **8.12%-ը**, ինչը կրկին ընդգծում է Ակբայի առաջատար դիրքն ակտիվների մեծությամբ առաջատար 3 բանկերի շարքում:
- Ակտիվները նախորդ եռամսյակի համեմատ աճել են **2.5%**-ով, մինչդեռ աճը տարեսկզբից կազմել է **1.3%**:

- Սեփական կապիտալը շարունակել է իր կայուն աճի միտումը՝ հասնելով **174.1 մլրդ ՀՀ դրամի:** Աճը նախորդ եռամսյակի համեմատ կազմել է **1.9%**, իսկ տարեսկզբի համեմատ՝ **6.5%**:
- Ընդհանուր պարտավորությունները մնացել են կայուն, աճը տարեսկզբի համեմատ կազմել է **0.14%**:

# ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ | 2025 1-ին կիսամյակ

**Վարկերի ուժեղ աճ, ցածր խնդրահարույց վարկեր, առաջատարություն լիզինգում**

## Համախառն վարկային պորտֆելն ըստ բիզնես ուղղությունների, մլրդ ՀՀ դրամ




- Համախառն վարկային պորտֆելը (ներառյալ ֆինանսական վարձակալությունը) կազմեց **678.3 մլրդ. ՀՀ դրամ**: Պորտֆելի աճը նախորդ եռամսյակի համեմատ կազմել է **3.6%**, իսկ տարեսկզբի համեմատ՝ **7.8%**: Այն կազմում է բանկային համակարգի ընդհանուր վարկերի **9.8%**-ը:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմում են պորտֆելի **76.4%**-ը (ներառյալ՝ լիզինգը)՝ ընդգծելով Ակբայի ռազմավարական ուղղվածությունը՝ խթանել տեղական արժույթով վարկավորումը և նվազեցնել արտարժույթի ռիսկերը:
- acba digital-ով տրամադրվող մեր **5G վարկերը 30.06.2025թ**. դրությամբ կազմում են սպառողական վարկավորման ավելի քան **67%**-ը, ինչը վկայում է մանրածախ վարկավորման ոլորտում թվայնացման բարձր մակարդակի մասին:

## Ֆինանսական վարձակալության, մլրդ ՀՀ դրամ




- Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պորտֆելը շարունակում է աճել՝ կազմելով **99.7 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը նախորդ եռամսյակի համեմատ կազմում է **4.6%**, իսկ տարեսկզբի համեմատ՝ **7.2%** աճ:
- Ակբան պահպանում է իր առաջատար դիրքը լիզինգի ոլորտում՝ ամրապնդելով իր դերը **փոքր** և **միջին ձեռնարկությունների ֆինանսավորման** և **ներդրումների խթանման գործում**:
- Խնդրահարույց վարկերը* շարունակում են մնալ ցածր՝ **1.4%**, իսկ 3-րդ խմբի վարկերը կայուն են՝ **2.19%**, ինչը հաստատում է պորտֆելի բարձր որակը:

** 30 օր և ավել ժամկետանց + վերջին 12 ամսվա դուրս գրված վարկեր*

# ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԸ | 2025 1-ին կիսամյակ

**«Ուժեղ և կայուն ավանդային բազա՝ վստահությամբ և դրամային կայունությամբ պայմանավորված»**

## Ավանդային և թողարկված պարտատոմսերի պորտֆելն ըստ բիզնես ուղղությունների,
մլրդ ՀՀ դրամ




## Ավանդային և թողարկված պարտատոմսերի պորտֆելի արժութային կառուցվածքը




**42.5 մլրդ ՀՀ դրամ**

Թողարկված **պարտատոմսերի** ծավալը 30.06.2025թ. դրությամբ

**13**

Գործող պարտատոմսերի տրանշների քանակը 30.06.2025թ. դրությամբ (8 դրամային և 5 դոլարային)

- Ավանդների և պարտատոմսերի պորտֆելը հասել է **607.9 միլիարդ ՀՀ դրամի**՝ հիմնված մեր ավելի քան **556,000** ավանդատուների վստահությամբ, որը կազմում է ոլորտի ընդհանուր ավանդների **8.6%**-ը:
- Տեղական արժույթով ավանդները կազմում են ընդհանուր պորտֆելի **66.2%**-ը՝ ամրապնդելով ֆինանսավորման կայունությունը և նվազագույնի հասցնելով արտարժութային ռիսկի ազդեցությունը:

**«Ամուր կապիտալային բազա, որը թույլ է տալիս երկարաժամկետ աճ»**

## Ընդհանուր կապիտալ, մլրդ ՀՀ դրամ




## Զուտ շահույթ, մլրդ ՀՀ դրամ




## Ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվ




- 2025 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ Ակբա Բանկի ընդհանուր կապիտալը հասել է **174.1 մլրդ ՀՀ դրամի**, ինչը տարեսկզբի համեմատ կազմում է **6.5%** աճ:
- Զուտ շահույթը շարունակում է կայուն աճի միտում ունենալ՝ 2025 թվականի երկրորդ եռամսյակում հասնելով **17.2 մլրդ ՀՀ դրամի**, ինչը **33.3%**-ով ավելի է նախորդ համադրելի ժամանակաշրջանի համեմատ:
- Ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցը կազմում է **22.7%**, ինչը զգալիորեն բարձր է կարգավորողի սահմանած **11%** նվազագույնից, ինչը վկայում է Բանկի ուժեղ ֆինանսական կայունության և կապիտալի արդյունավետ կառավարման մասին:

# ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ |
## 2025 1-ին կիսամյակ

**«Բարձր կապիտալի շահութաբերություն և ծախսեր/եկամուտներ գործակցի շարունակական բարելավում»**

### Ակտիվների շահութաբերություն (ROA)




### Կապիտալի շահութաբերություն (ROE)




### Ծախսեր/Եկամուտներ (CIR)




- Ակբա բանկը պահպանում է բարձր շահութաբերություն. 2025 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ սեփական **կապիտալի 20.4%** և **ակտիվների կայուն 3.7%** շահութաբերությամբ, որոնք երկուսն էլ ավելի բարելավված են առաջին եռամսյակի համեմատ և համապատասխանում են Բանկի միջնաժամկետ ռազմավարական նպատակներին:
- Գործառնական արդյունավետությունը նույնպես ամրապնդվել է. տարվա սկզբից ի վեր ծախսեր/եկամուտներ գործակիցը բարելավվել է **3.6 տոկոսային կետով**, ինչն արտացոլում է ծախսերի արդյունավետ **կառավարումը** և **կայուն եկամտի մոդելը**:

acba

# ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՃԸ | 2025 1-ին կիսամյակ

**«Հաճախորդների և քարտերի առաջատարություն՝ պայմանավորված թվային տեխնոլոգիաների կիրառմամբ»**

## Ակտիվ հաճախորդների քանակը




- **Ակբա բանկը շարունակում է ընդլայնել իր հաճախորդների բազան:** Ակտիվ հաճախորդների քանակը 30.06.2025թ. դրությամբ կազմել է ավելի քան **661,000:** Այս ցուցանիշը շարունակաբար գրանցում է կայուն աճի դինամիկա: Ակտիվ հաճախորդների քանակի աճը նախորդ եռամսյակի համեմատ կազմել է 2%, իսկ տարեսկզբից՝ **3.2%:**

- **Թվային տեխնոլոգիաների ներդնումը շարունակում է կենտրոնական դեր խաղալ մեր գործունեության մեջ:** acba digital հավելվածն օգտագործող հաճախորդների մասնաբաժինը 2022 թվականի **66%**-ից աճել է մինչև **91%** 2025 թվականի երկրորդ եռամսյակի ավարտի դրությամբ: Վերջին տարվա ընթացքում հարթակին միացել են ավելի քան **280,000 նոր օգտատերեր**՝ ամսական ակտիվ օգտատերերի թիվը հասցնելով **354,000**-ի, ինչը **31%**-ով ավելի է 2024 թվականի վերջի համեմատ և կազմում է ակտիվ հաճախորդների ընդհանուր թվի **54%**-ը:

# ՔԱՐՏԱՅԻՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԱՌԱՋԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ |

2025 1-ին կիսամյակ

**«Հաճախորդների և քարտերի առաջատարություն՝ պայմանավորված թվային տեխնոլոգիաների կիրառմամբ»**

## Քարտերի քանակը




- Քարտերի քանակը շարունակում է աճել. թողարկվել է ավելի քան **849,000 քարտ**, ինչը տարեսկզբից **9.5%**-ով և նախորդ եռամսյակի համեմատ **4.4%**-ով ավելի է: **American Express** քարտերը, որոնք Հայաստանում բացառապես թողարկվում են Ակբայի կողմից, այժմ կազմում են ընդհանուր քարտերի **16.3%**-ը՝ տարեսկզբից **22%**-ով և նախորդ եռամսյակի համեմատ **9%**-ով ավելի:
- Ակբան պահպանում է իր **#1 դիրքը քարտերի թողարկման ոլորտում**, որտեղ մշտապես գերակշռում են թվային ուղիներով պատվերները, ինչը վկայում է հաճախորդների կողմից ինքնասպասարկման ուղիներից ավելի շատ օգտվելու մասին:

## Գործարքների ուղիները




- **Թվային ուղիները** (մոբայլ և օնլայն) կազմում են բոլոր գործարքների **65.2%**-ը, մինչդեռ մասնաճյուղերի միջոցով գործարքները կազմում են ընդամենը **5.6%**-ը, ինչն արտացոլում է հաճախորդների կողմից թվային բանկային լուծումների լայն կիրառումը:

# ՄԵՐ ՀԱՎԵԼՎԱԾԸ

**«Լիովին թվային բանկային փորձառություն. պարզ, անվտանգ և ավելին քան բանկինգը»**




APP STORE: 4.2/5 (1.2K)

PLAY STORE: 4.5/5 (5K)

**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՈԲԱՅԼ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ - ՀԱՅԱՍՏԱՆ 2024**
**INTERNATIONAL FINANCE AWARDS**

### ԾՈՒՐՋՕՐՅԱ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Առցանց գրանցում, անվտանգ մուտք
- Փոխանցումներ և վճարումներ
- Առցանց պատվերներ, քարտերի արգելափակում և փակում

### ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Լիովին թվային ավանդների ներդնում
- Ավանդների և հաշիվների առցանց բացում և փակում

### ՎԱՐԿԱՅԻՆ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ

- Լիովին թվային սպառողական վարկավորում
- Նախապես հաստատված վարկային սահմանաչափեր
- Վարկերի մարումներ

### ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

- Առցանց ներդրումային հաշվի բացում
- Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված արժեթղթերով առևտուր
- Արժեթղթերի հաշվի կառավարում

### ԱՎԵԼԻՆ ՔԱՆ ԲԱՆԿԻՆԳԸ

- Chatbot
- Ապահովագրություն - ավտոմեքենայի, ճամփորդության և այլն
- Կենսաթոշակային խնայողություններին հետևել

### ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ

- *5G սպառողական վարկի սահմանաչափի ցուցադրում ֆիզիկական անձանց համար*
- *Քարտերի փոխարինման պարզեցում*
- *PIN կոդերի կառավարման պարզեցում*
- *CVV կոդերի ցուցադրում*
- *Չինական յուան (CNY) և արաբական դիրհամ (AED) արժույթով ընթացիկ հաշիվների բացում*
- *Քաղվածքների կառավարման բարելավում*

- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- 2025Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- **ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# ՄԵՐ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ | 2025 1-ին կիսամյակ

**«1 բաժնետոմսի գծով շահույթը և հաշվեկշռային արժեքը արտացոլում են կապիտալի աճի ուժեղ ներուժը»**

**29,086 ՀՀ դրամ (+10% տարեսկզբից)**
1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեք

**5,749 ՀՀ դրամ (+21% տարեսկզբից)**
1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ (տարեկանացված)

**15,500 ՀՀ դրամ**
2-րդ եռ. ամենաբարձր գինը (02/05/2025)

**13,200 ՀՀ դրամ**
2-րդ եռ. ամենացածր գինը (21/05/2025)

**14,528 ՀՀ դրամ**
2-րդ եռ. միջին գինը (+7.3% նախորդ ժամ. համեմատ)

**14,900 ՀՀ դրամ**
2-րդ եռ. բացման գինը (01/04/2025)

**14,122 ՀՀ դրամ**
2-րդ եռ. փակման գինը (30/06/2025)

**40.7%**
Շահույթի եկամտաբերություն (Earnings Yield)[1]
*հաշվարկված է 2-րդ եռ. փակման գնով*

**2.46**
Գին/Շահույթ գործակից (Price-to-Earnings Ratio, P/E)[2]
*հաշվարկված է 2-րդ եռ. փակման գնով*

**Բաժնետոմսի շուկայական արժեք** (ՀՀ դրամ)




- Ակբայի բաժնետոմսերի շուկայական արժեքը գրեթե **կրկնակի ցածր է** հաշվեկշռային արժեքից, ինչն իրենից ներկայացնում է գրավիչ **երկարաժամկետ ներդրումային հնարավորություն**
- **Բարձր եկամտաբերությունը** և **ցածր գին/շահույթ գործակիցն** խոսում են բանկի շահութաբեր հեռանկարի մասին, ինչը ենթադրում է, որ Ակբան թերագնահատված է և հազվագյուտ հնարավորություն է առաջարկում ներդրողների համար
- Ակբայի կայուն և բարելավվող եկամտաբերությունը հիմք են ստեղծում շուկայական վերագնա- **հատման** և **բաժնետերերի արժեքի բարձրացման համար**

1. *Շահույթի եկատմաբերություն = 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի չափ / 1 բաժնետոմսի շուկայական արժեք*
2. *Գին/Շահույթ գործակից = 1 բաժնետոմսի շուկայական արժեք / 1 բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի չափ*

## Ակբա բանկի բաժնետոմսերով գործարքների ծավալները Ֆոնդային բորսայում մլրդ ՀՀ դրամ




- Ակբան շարունակում է զգալի դեր խաղալ Հայաստանի ֆոնդային շուկայում՝ Ակբայի բաժնետոմսերը շարունակում են գերիշխել **AMX** ֆոնդային բորսայի բաժնետոմսերով առևտրի ծավալներում:
- Ակբայի բաժնետոմսերի 2-րդ եռամսյակի միջին օրական առևտրի ծավալը կազմել է **404 բաժնետոմս (+76% տարեկան աճ)**՝ արտացոլելով աճող **իրացվելիություն** և **ներդրողների հետաքրքրություն**:

**ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐ**

**«Ստեղծում ենք երկարաժամկետ արժեք»**

## Շահույթի բաշխում, մլրդ ՀՀ դրամ

### Վճարման գործակից




## 2024 թվականի շահութաբաժիններ

**1,100 ՀՀ դրամ** (+10% նախորդ տարվա համեմատ)
Շահութաբաժին 1 բաժնետոմսի դիմաց

**20%**
Շահութաբաժինների վճարման նվազագույն գործակից համաձայն Շահութաբաժնային քաղաքականության

## Տեղաբաշխված բաժնետոմսեր,
մլն հատ



acba

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ 29.05.2025Թ. ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

## ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ



**ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**
Խորհրդի նախագահ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ



**ԲՐՈՒՆՈ ՇԱՐՐԻԵ**
Խորհրդի ավագ անկախ անդամ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 2 ՏԱՐՈՎ



**ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
Խորհրդի անկախ անդամ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ



**ԱՐԱՄ ԲԱԲԱՅԱՆ**
Խորհրդի անդամ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՉԱՆՅԱՆ**
Խորհրդի անդամ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ



**ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ**
Խորհրդի անդամ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ

## ՆՈՐ ԱՆԴԱՄ



**ՍՈՆԱ ԻՇԽԱՆՅԱՆ**
Խորհրդի անկախ անդամ
ՆՇԱՆԱԿՎԵԼ Է 3 ՏԱՐՈՎ

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ



**ԿԼԱՈՒՍ ԳՐԵՍՍԵՆԲԱՈՒԵՐ**
Խորհրդի անկախ անդամ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵԼ ԵՆ



**ՀԵՆՐԻԿ ՔՈՉԻՆՅԱՆ**
Խորհրդի անդամ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵԼ ԵՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- ԱԿԲԱ ԲԱՆԿ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
- ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
- 2025Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
- ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | 30/06/2025 (չաուդիտված) | 31/12/2024 (աուդիտված) |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 101,897,833 | 106,030,069 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | 50,502,513 | 81,482,428 |
| Ներդրումային արժեթղթեր | 46,563,407 | 62,108,609 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 578,621,671 | 536,210,032 |
| ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ | 99,695,413 | 93,105,821 |
| Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում | 1,670,686 | 2,044,092 |
| Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 28,338,343 | 29,114,084 |
| Այլ ակտիվներ | 22,093,977 | 21,443,834 |
| **Ընդամենը ակտիվներ** | **943,395,591** | **931,697,149** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Բանկերի ավանդներ և մնացորդներ | 2,874,777 | 462,797 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 565,405,637 | 584,122,036 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 42,572,086 | 39,408,576 |
| Այլ փոխառություններ | 127,104,173 | 110,883,860 |
| Այլ պարտավորություններ | 15,570,716 | 16,927,858 |
| Ստորադաս վարկեր | 13,212,742 | 12,632,502 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **769,311,557** | **768,256,770** |
| | | |
| **ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 89,775,000 | 89,775,000 |
| Էմիսիոն եկամուտ | 3,811,978 | 3,811,978 |
| Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների պահուստ | 3,517,422 | 3,517,422 |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | 3,743,983 | 3,757,943 |
| Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ | 323,539 | 304,799 |
| Չբաշխված շահույթ | 59,445,862 | 48,806,987 |
| **Ընդամենը կապիտալ** | **174,084,034** | **163,440,379** |
| **Ընդամենը կապիտալ և պարտավորություններ** | **943,395,591** | **931,697,149** |

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ | 2025 1-ին կիսամյակ

| Հազ. ՀՀ դրամ | 01/01/25-30/06/25 (չստուգված) | 01/01/24-30/06/24 (չստուգված) |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով | 43,889,430 | 38,221,210 |
| Այլ տոկոսային եկամուտ | 6,887,445 | 6,017,712 |
| Տոկոսային ծախս | (19,615,777) | (18,736,166) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 31,161,098 | 25,502,757 |
| Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում/ (ծախս) | (1,666,079) | (1,005,934) |
| **Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո** | 29,495,019 | 24,496,823 |
| Միջնորդավճարների գծով եկամուտ | 8,190,754 | 7,291,721 |
| Միջնորդավճարների գծով ծախս | (4,121,514) | (2,849,120) |
| Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | (322,448) | 119,282 |
| Զուտ օգուտ արտարժույթի առքուվաճառքից | 3,303,919 | 2,355,310 |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | 613,843 | (24,939) |
| Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս | 799,178 | 557,105 |
| (Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով հակադարձում | - | - |
| Այլ եկամուտ | 321,243 | 316,011 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | 8,784,975 | 7,765,370 |
| Անձնակազմի գծով ծախսեր | (11,173,203) | (10,295,557) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (1,946,493) | (1,789,361) |
| Այլ գործառնական ծախսեր | (1,404,548) | (1,397,312) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (2,593,895) | (2,765,840) |
| **Ոչ տոկոսային ծախս** | (17,118,139) | (16,248,071) |
| Շահույթ մինչև շահութահարկով հարկումը | 21,161,854 | 16,014,122 |
| Շահութահարկի գծով ծախս | (3,953,438) | (3,073,457) |
| **Հաշվետու տարվա շահույթ** | 17,208,416 | 12,940,665 |

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Սույն ներկայացումը նախատեսված է բացառապես «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի (նաև՝ «Ակբա» կամ «Բանկ») առկա և պոտենցիալ բաժնետերերի, վերլուծաբանների և այլ շահառուների համար՝ ընդհանուր տեղեկատվական նպատակներով, և չպետք է դիտարկվի որպես որևէ հրավեր, առաջարկություն կամ առաջարկ՝ վաճառելու որևէ արժեթղթ կամ որևէ ներդրումային որոշում կայացնել Բանկի արժեթղթերի հետ կապված որևէ գործարք կնքելու համար։ Ակբան որևէ պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում այս ներկայացման բովանդակության հիման վրա կայացված որևէ որոշման համար։

Ներկայացումը ներառում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք արտացոլում են ապագա իրադարձությունների, ֆինանսական միտումների և կատարողականի վերաբերյալ ներկայիս սպասումներն ու կանխատեսումները։ Նման ապագային ուղղված հայտարարությունները պարունակում են հայտնի և անհայտ ռիսկեր, անորոշություններ և այլ գործոններ։ Այս հայտարարությունները հիմնված են Բանկի ներկա և ապագա ռազմավարությունների, ինչպես նաև ապագայում գործելու միջավայրի վերաբերյալ բազմաթիվ ենթադրությունների և գնահատականների վրա։ Նման ենթադրություններն ու գնահատականները ներառում են ռիսկեր և անորոշություններ, որոնցից շատերը գտնվում են Ակբայի վերահսկողությունից դուրս։ Իրական արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսվածներից կամ ենթադրյալներից։ Այս փաստաթղթում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես շահույթի կանխատեսում։ Վարկերի և ավանդների եռամսյակային աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2025 թվականի հունիսի 30-ի դրությամբ։ Տարեկան աճը հաշվարկելու համար՝ առանց արժույթի փոխարժեքի ազդեցության, մենք օգտագործել ենք համապատասխան փոխարժեքները 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ։

Ներկայացումը կարող է պարունակել տվյալներ և վերլուծություններ, որոնք ստացվել են հրապարակային հասանելի աղբյուրներից, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշները և բանկային ոլորտի վիճակագրությունը՝ ներկայացման օրվա դրությամբ, և կարող են փոփոխվել առանց նախնական ծանուցման։ Ակբան հիմնվում է հուսալի համարվող աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա, բայց չի երաշխավորում դրանց ճշգրտությունը կամ ամբողջականությունը։ Ակբան որևէ պարտավորություն չի ստանձնում թարմացնելու կամ վերանայելու այս ներկայացումը կամ այստեղ պարունակվող ապագային ուղղված հայտարարությունները՝ նոր տեղեկատվության, ապագա իրադարձությունների կամ այլ պատճառներով, բացառությամբ օրենքով պահանջվող դեպքերի։

Այս ներկայացման մեջ պարունակվող որոշակի ֆինանսական տեղեկատվություն վերցված է Բանկի՝ առանց արտաքին աուդիտի եզրակացության կառավարչական հաշիվներից և ֆինանսական հաշվետվություններից։ Այն ոլորտները, որոնցում կառավարչական հաշիվները կարող են տարբերվել IFRS ստանդարտներից, կարող են նշանակալի լինել։ Ներկայացման մեջ ներառված որոշ թվային միավորներ ենթարկվել են կլորացման և ճշգրտումների։ Հետևաբար, որոշակի աղյուսակներում որպես ընդհանուր թվեր ներկայացված թվային միավորները կարող են չհամարվել դրանց նախորդող թվերի թվաբանական ամփոփում։

«Կայուն աճ, բարձր շահութաբերություն, ուժեղ կառավարում:
Ակբա բանկը լավ դիրքավորված է՝ այսօր արժեք
ստեղծելու և ապագայի համար ավելի մեծ հնարավորություններ
կառուցելու համար»

# Ոգեշնչված ձեզնով

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Ներդրողների հետ հարաբերությունների բաժին
+374 10 318888 (8129); +374 94 700 681 | ir@acba.am | www.acba.am
ՀՀ, ք. Երևան, 0002, Արամի փ. 82-84